# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

## ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/63 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**22 մայիսի 2026թ.**

**ք. Մեծամոր**

2026թ. մայիսի 18-ից 22-ը ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ անվադողերի ձեռքբերման նպատակով թիվ ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/63 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Կ. Մաիլյան՝ | Մեծամորի համայնքի «Մեծամոր Բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ, |
| Հ. Պետրոսյան՝ | Մեծամորի համայնքի «Մեծամոր Բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրենի օգնական: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Կ. Մաիլյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Լ. Հայրապետյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի թվով երկու անդամները, բացակայում էր «Մեծամորի համայնքի «Մեծամոր Բարեկարգում» ՀՈԱԿ-ի փոխտնօրեն Ա. Թորոսյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:
5. Համակարգի միջոցով գեներացված հայտարարություն/ներ/ի և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների եվ հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

7. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. մայիսի 18-ին, ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում ժամը 11:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված գնման գինը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1-ին | HOWO անվադող | 4,180,000.00 | 19.05.2026 11:00 | 4,200,000.00 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև Մասնակից/ներ/ը/.

| Հ/հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «Ամուրա» ՍՊԸ | Ավան, 2-րդ միկր, 2/10, +37433844886 | amura.tender@mail.ru. | 01091505 |
| 2 | «111 ԱՎՏՈ» ՍՊԸ | ՀՀ ք. Արմավիր Երևանյան փողոց 57/5, +37493880119 | vladhovhannisyan1988@gmail.com | 01367025 |
| 3 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | Ք.Երևան, Դավիթ բեկի 180/26, +37477699551 | h5r.gasparyan@yandex.com | 01096027 |
| 4 | «ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ | Ք. Երևան,Մոլդովական 37/46 2/5, +37444755456 | lllmanagment2025@gmail.com | 01084956 |
| 5 | «ԱՐՍԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ | ԵՐԵՎԱՆ, ՆՈՐ ՆՈՐՔ, Մոլդովական 60 0062, +37495966698 | vidtardan@gmail.com | 01091058 |

2026թ. մայիսի 19-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ՝ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. մայիսի 19-ին Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած Մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և Մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չ/Հ | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ /լրացվում է հայտերի գնահատման վերջնարդյունքում/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |
| 1 | 1 | «Ամուրա» ՍՊԸ | 4,200,000.00 | 900,000,000.00 | 20% | 1,080,000,000.00 | 3,698,000.00 | 20% | 4,437,600.00 | **Մերժված** |
| 1 | 2 | «111 ԱՎՏՈ» ՍՊԸ | 4,200,000.00 | 4,180,000.00 | 0% | 4,180,000.00 | 3,740,000.00 | 0% | 3,740,000.00 | X |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 3 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 4,200,000.00 | 9,958,990.00 | 20% | 11,950,788.00 | 9,958,990.00 | 20% | 11,950,788.00 | **Մերժված** |
| 1 | 4 | «ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ | 4,200,000.00 | 9,958,999.00 | 20% | 11,950,798.80 | 9,958,999.00 | 20% | 11,950,798.80 | **Մերժված** |
| 1 | 5 | «ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 4,200,000.00 | 24,500,000.00 | 20% | 29,400,000.00 | 24,500,000.00 | 20% | 29,400,000.00 | **Մերժված** |

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

2026թ. մայիսի 22-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.
2. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| **Հ/Հ** | **Մասնակցի անվանումը** | **Գնահատման արդյունքը** |
|---|---|---|
| 1-ին | «111 ԱՎՏՈ» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոնշյալը, 2026թ. մայիսի 22-ին Հանձնաժողովը որոշեց, Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 3-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Մասնակիցների թվից այն մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում 2026թ. ապրիլի 28-ին և մայիսի 5-ին տեղի են ունեցել փոփոխություններ:
2. Գնման վերաբերյալ ներկայացվել են հարցումներ 2026թ. ապրիլի 23-ին, ապրիլի 28-ին և մայիսի 11-ին և տրվել պարզաբանումներ համապատասխանաբար 2026թ. ապրիլի 27-ին, ապրիլի 30-ին և մայիսի 11-ին, իսկ հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից տրամադրված պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին համակարգի միջոցով ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու

դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Կ. Մաիլյան ______________

*Հանձնաժողովի անդամ՝*

Հ. Պետրոսյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Լ. Հայրապետյան ______________